

ԱԼԵՔՍ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ԸՆԾԱՑԱՐԱՆ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԶԱՒԱՔՈՅԹՆԵՐ

Ա. Մասնագիտական դասախոսութիւն

Օգտուելով նախկին Երուսաղէմացի Տէթ. Կարօ Զաքարեանի քաղաքս կարճատեւ այցելութենէն, Հաւաքոյթ մը կազմակերպուեցաւ Երկուշաբթի, 29 Նոյ. 1976, կ. վ. ժամը 4-5:30, որուն ընթացքին յարգելի Հոգեբոյժը խօսեցաւ «Ուսանելու Հոգեբանութիւնը» շատ շահեկան և այժմէական նիւթին շուրջ:

Ուսանողներու Հետաքրքրութեան ապացոյց էին բազմաթիւ հարցումները զորս անոնք ուղղեցին Տէթ. Զաքարեանին, բանախօսութեան աւարտին:

Բ. Գրող Վահրամ Մավեանին նուիրուած գրական երեկոյ

Շաբաթ, 4 Դեկտ. 1976, երեկոյեան ժամը 6:30-8 տեղի ունեցաւ գրական Հաւաքոյթ մը, նուիրուած գրող Վահրամ Մավեանի ծննդեան յիսնամեակին:

Հանդէսը պատշաճ խօսքերով բացաւ Հայերէնի և գրականութեան դասախօս Պրն. Գէորգ Հատիտեան, իսկ յորելեարին կեանքին և մանաւանդ գրականութեան մասին շատ գեղեցիկ և հմտալից բանախօսութիւն մը ըրաւ Ընծա-յարանի աւարտական կարգէն Բարչ. Տիրացու Սիմոն Պալեան: Գործադրուեցաւ կոկիկ և յաջող գեղարուեստական յայտադիր մը, և փակման խօսքը կատարեց Պրն. Արայ Գալայճեան՝ որ յորելեարի մասին պատմած իր քանի մը յուշերով ներկայացուց մարդը և հայր Վահրամ Մավեանի մէջ: Թորդորական էղրակացնող խօսքերով Հանդէս եկաւ նաև Վերատեսուչ Գեորգ. Տ. Շահէ Արք. ԲՃՃմեան:

Գ. Առաջելոցն Թադէոսի և Բարթողիմէոսի

Առաջին լուսաւորիչներու՝ Թադէոս և Բարթողիմէոս առաքելներու տօնին առիթով Հաւաքոյթ մը սարքուեցաւ Շաբաթ, 11 Դեկտ. 1976, երեկոյեան ժամը 7-8:15:

Օրուան տօնելի սուրբերուն մասին հակիրճ խօսքեր ընելէ ետք, Հանդէսը բացուած յայտարարեց Հոգչ. Տ. Հայկազուն Արք. Մեկդոնեան: Իսկ ընդարձակ և պատմական ծանօթութիւններով ճիշտացած բանախօսութիւն մը ը-

բաւ Հոգւ. Տ. Ասպետ Աբղ. Պալեան, որ չմոռցաւ նաև յիշատակել Հայաստանի առաջին դարերու Քրիստոնեայ նահատակները:

Գործադրուեցաւ շարականներէ և կրօնաշուշնչ ընթերցումներէ բաղկացած դեղեցիկ յալառգիր մը, իսկ փակման խօսքը մեծ յաջողութեամբ կատարեց Հոգւ. Տ. Սևան Վրդ. Ղարեպեան: Հանդէսը աւարտեցաւ զՀայր մերոյ համախումբ երգեցողութեամբ:

Դ. Հայ մշակոյթի երեկոյ

Շաբաթ, 18 Դեկտ. 1976, երեկոյեան ժամը 6.30-8.45, տեղի ունեցաւ Հայ մշակոյթին նուիրուած հաւաքոյթ մը, ղեկավարութեամբ Պրն. Գէորգ Հինդլիանի՝ որ նաև ըրաւ բացման խօսքը: Երեկոյի ընթացքին Ժառանգաւորաց աւարտական Հինդերորդ դասարանի ուսանողները ելոյթներ ունեցան անդլերէն լեզուով, ներկայացնելով Օրդ. Սիրարփի Տէր Ներսէսեանի, հանդուցեալ Յարութիւն Քիւրտեանի և հանդուցեալ Եղուարդ Իւթիւճեանի բանասիրական-գիտական վաստակը:

Երեկոյթի աւարտին, Պարոններ Փայլակ Անթապեան և Արայ Գալայճեան խօսեցան վերոյիշեալ բանասէրներու մասին և դնահատեցին անոնց դերը՝ մասնաւորաբար Հայ մշակոյթը օտարներուն ծանօթացնելու կարևոր աշխատանքին մէջ:

Ե. Հայկական եկեղեցիներու գումատը Յկարմերու ցուցադրութիւն

Շաբաթ, 25 Դեկտ. 1976, երեկոյեան ժամը 6.30-7.30 տեղի ունեցաւ հայկական եկեղեցիներու գումատը պատկերներու՝ մոզական լապտերով ցուցադրութիւն մը, ղեկավարութեամբ Պրն. Յարութիւն Սամուէլեանի:

Ցուցադրութենէն առաջ հայկական եկեղեցիներու և մենաստաններու անցեալին մէջ ունեցած դերին ու նշանակութեան մասին բացատրողականներ տուին Պարոններ Փայլակ Անթապեան և Յարութիւն Սամուէլեան: Ուսանողները մեծ հետաքրքրութեամբ դիտեցին Հայ եկեղեցիներու նկարները, և բազմաթիւ հարցումներ ըրին, որոնց պատասխանեց Պրն. Ե. Սամուէլեան:

